Ազգ
Azg
8 ՆՈՅԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 193(5276)
ISSN: 1829-1651

# Հեղափոխությունը վատ բան է

Հայաստանցիների մասին «ամեն ինչ իմացող» Ահարոն Ադիբեկյանը, ում անգամ առատ տեղացող ձյունը չի խանգարում սոցիալական կարծիք ուսումնասիրել Հայաստանի հեռավոր մարզերում, մի առիթով, ելնելով իր ուսումնասիրություններից, ասաց. «Հայաստանում հնարավոր չէ հեղափոխություն անել, հայերն իրենց բնույթով հեղափոխական չեն»:

Առաջին հայացքից ազգի մասին այս վարկածը թվում է խիստ սուբյեկտիվ, անգամ ոչ ճշմարտանման, մասնավորապես՝ հայերս ունենք հեղափոխականին բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները, ասենք՝ ծայրահեղական ենք, պայքարող ենք, համառ ենք, ուժեղ ենք... Բայց, միեւնույն ժամանակ, աշխարհում երեւի չկա էլի այսպիսի մի երկիր, որտեղ այսքան շատ խոսեն հեղափոխություն անելուց, դրա անհրաժեշտությունից: Իսկ հեղափոխության մասին մշտապես խոսողը չի կարող հեղափոխություն անել, այնպես, ինչպես պատերազմի մասին խոսողը չի կարող պատերազմ անել, որովհետեւ իրականում չգիտեն, թե ի՞նչ են պատերազմն ու հեղափոխությունը, հակառակ պարագայում չեն ուզի:

Դրանք գրեթե միեւնույն բաներն են, դրանցից բխած ցնցումը գրեթե համազոր է, հասարակության վրա դրանք գրեթե նույն կերպ են անդրադառնում, նույն կերպ՝ վատ: Հետեւաբար հատկապես ժամանակակից աշխարհում, որտեղ «սեփական արյամբ հայրենիքի հողը մեկ անգամ ներկելը հանուն հայրենիքի ազատության» այլեւս արդիական չէ, պետք է ընդունել՝ հեղափոխությունը, ինչպես եւ պատերազմը, վատ երեւույթներ են, եւ սա իշխանահաճոյություն կամ ամոթ չէ խոստովանելը:

Հիմա, եթե մենք ամեն կերպ խուսափում ենք նոր պատերազմից, ինչո՞ւ մեզ համար նույնչափ խուսափելի չէ հեղափոխությունը՝ դրա դասական ձեւով, այսինքն՝ բռնություններով, ազգի տարբեր շերտերի միջեւ թշնամանքով, արյամբ, ավերածություններով... Ի վերջո անցանկալիից ազատվելու համար պարտադիր չէ ավերել կամ սպանել. Եգիպտոսում ավերեցին եւ սպանեցին, Լիբիայում ավերեցին ու սպանեցին, հետո՞, Սիրիայում շարունակում են ավերել եւ սպանել, վե՞րջը...

Անցանկալիից ազատվելու այլ միջոցներ կան, օրինակ՝ բարձրանալ, հմտանալ, զարգանալ, աճել, հայտնվել ավելի բարձր դիրքում եւ մակարդակում, քան այն անցանկալին է, որից ցանկանում ենք ազատվել: Եթե դա իշխանությունն է, ուրեմն՝ ավելի լավը լինել իշխանությունից, ոչ թե դրան արժանին, եթե դա կոռումպացված համակարգն է, ուրեմն չնպաստել այդ համակարգի ծաղկմանը: Ի վերջո կոռուպցիա, կաշառք վերցնող չի կարող լինել մի միջավայրում, որտեղ կաշառք տվող չկա: Իսկ մենք հեղափոխություն ենք անում կաշառքի դեմ, բայց շարունակում ենք կաշառք տալ:

Երբ չտանք, երբ աճենք, երբ բարձրանանք, էլ հեղափոխություն անելու կարիք չենք զգա, քանի որ հեղափոխությունն արդեն արած կլինենք, մնացածը՝ արյուն է, անմեղ արյուն:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ինչո՞ւ են հնարավոր էշերի կամ շշերի «հեղափոխությունները»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Որ մեր ոստիկանության աշխատանքը հեռու է ցանկալիից, սա զգում է ոստիկանության հետ առնչվող ամեն քաղաքացի, ու ոստիկանության աշխատանքը կուզեինք շատ ավելի բարձր մակարդակում, եւ որ կարեւորն է՝ վստահության հարթույթից դիտարկել, սա շատերիս կյանքի օրակարգում առկա ցանկությունների շարքում դեռ երկար է լինելու: Ու չարժե մատնացույց անել զանազան զեկույցների զանազան թվերը՝ թե այս ու այս բարեփոխումներն են կատարվել ոստիկանությունում, այդ թղթերով մեր ոստիկանը բարեկիրթ է եւ խելացի: Իրականում հայերս վաղուց ենք երազում ուղեղը եւ ոչ թե բռունցքն աշխատացնող հայ ոստիկան, որին վստահաբար կդիմի նեղն ընկնելիս ու պաշտպանություն հայցելիս: Երազում ենք, այո, սիրել եւ վստահել մեր ոստիկանին:

Հիմա եթե ասվածի համատեքստում հայացք նետենք նոյեմբերի 5-ին Ազատության հրապարակում կատարվածին, դրանից էլ առաջ՝ էշերի երթին նույն Ազատության հրապարակում, հենց միայն այդ երկու իրադարձությունների ֆոնին անհասկանալի է մնում մեր ոստիկանության գործողությունների տրամաբանությունը: Ո՞նց կարելի է թեկուզ մի քանի վայրկյան էշեր մտցնել քաղաքի սրտում գտնվող հանրային վայր ու չարժանանալ ոստիկանության կայծակնային արձագանքին, թեկուզ նույնիսկ այն պարագային, որ մի ամենակարող օլիգարխ կարող է եղած լինել այդ հանճարեղ գաղափարի ակունքներում:

Տես էջ 3

# Հնագետները Դվինի տեղավայրում եզակի եւ հետաքրքրական բնակելի թաղամաս ու շինություններ են բացել



Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի հնավայրի գտածոները՝ ջնարակված խեցեղենը, ապակու որոշ տեսակներ, կարող են էտալոն լինել տարածաշրջանի համար: Հնագիտական արշավախմբի ղեկավարի տեղակալ Նյուրա Հակոբյանն «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում, ամփոփելով 2013-ի պեղաշրջանի աշխատանքը, նշեց, որ աշխատանքներն ընթացել են կենտրոնական թաղամասի՝ կաթողիկոսական 5-րդ դարի պալատի արեւմտյան եւ արեւելյան հատվածներում: «Պեղումներ են իրականացվել նաեւ հարավային բուրգի շրջանում, կաթողիկոսական պալատի հարավ-արեւմտյան հատվածում, որի արդյունքում բացվել է վաղ երկաթի դարաշրջանի թրծման վառարան՝ երկու օդամուղներով:

Տես էջ 3

# Նոր սերնդի ՀԴՄ-ներն առաջինը ներդրվելու են Հայաստանում

Ինչպես երեկ լրագրողներին հայտնեց պետական եկամուտների կոմիտեի փոխնախագահ Վախթանգ Միրումյանը, նոր սերնդի ՀԴՄ-ները դեռեւս որեւէ այլ երկրում դեռ չեն գործարկվել եւ առաջինը ներդրվելու են Հայաստանում: Նա տեղեկացրեց, որ այդ ՀԴՄ-ները ցուցահանդեսում ցուցադրված են եղել որպես նորույթ:

Ըստ ՊԵԿ փոխնախագահի՝ դրանք ունեն բացառիկ ֆունկցիոնալ հնարավորություններ: Նախ՝ բացառում են ծրագրային միջամտությունները, ինչը հարկային վարչարարության տեսանկյունից ամենաառաջնային խնդիրն է, ապա՝ տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն կունենան ՀԴՄ-ի միջոցով դուրս գրելու հարկային հաշիվներ, այնուհետեւ՝ նաեւ ոչ կանխիկ եղանակով վճարումներ իրականացնելու: Այս մասին Վախթանգ Միրումյանը խոսեց՝ պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ են այդ ՀԴՄ-ներն այդքան թանկ եւ ինչո՞ւ է ներմուծում պետությունը: Ըստ ՊԵԿ փոխնախարագահի՝ ներկրողը պետական «ՀԴՄ ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ն է, որ շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում, բայց եթե շահույթ գոյանա, ուղղվելու է պետական բյուջե:

Ա. Մ.

# Կալիֆոռնիայի վրայով ասո՞ւպ է անցել




Կալիֆոռնիայի բնակիչները դարձել են մի արտասովոր երեւույթի ականատեսներ: Նոյեմբերի 6-ի ուշ երեկոյան նրանք երկնքում նկատել են խոշոր հրե գունդ: Կարճատեւ թռիչքից հետո երկնային մարմինը պայթել է եւ մասերի բաժանվել: Ենթադրաբար դա եղել է ասուպ:

Տեղական NBC-4 հեռուստաալիքը բազմաթիվ հեռախոսազանգեր է ստացել նահանգի տարբեր քաղաքներից, այդ թվում՝ Լոս Անջելեսից: Բնակիչները պատմել են «բռնկված աստղերի» եւ երկնային «հրավառության» մասին:

Մինչդեռ Լոս Անջելեսում գտնվող Գրիֆֆիթի աստղադիտարանի ներկայացուցիչները չեն հաստատել երկնային մարմնի հայտնվելու փաստը եւ միայն նշել են, որ իրենք բազմաթիվ հարցեր են ստացել բնակիչներից: Լոս Անջելեսում ԱՄՆ քաղաքացիական ավիացիայի գործակալության ներկայացուցիչ Մերի Սլոսոնն իր հերթին հայտարարել է, թե գործակալությունը ասուպային անձրեւի կամ նման երեւույթների վերաբերյալ ծանուցումներ չի ստացել:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հիշեցնում է, որ 2013 թ. փետրվարի 15-ին Ռուսաստանի տարածքի վրա ընկան այն ասուպի բեկորները, որը Երկրի վրա ընկած խոշորագույն երկնային մարմինն էր 1908 թ. Տունգուսյան ասուպի անկումից ի վեր: Ասուպային անձրեւի ականատեսները դարձան ՌԴ Տյումենի, Սվերդլովսկի, Չելյաբինսկի, Կուրգանի մարզերի եւ Բաշկիրիայի բնակիչները:

Պ. Ք.

# Շավարշ Կարապետյանին վերհիշեցին Ռուսաստանում



Ռուսաստանում շարունակվում է օլիմպիական ջահերթը: Անծայրածիր երկրի համար դա այնքան էլ դյուրին գործ չէ՝ Հեռավոր Արեւելք, Արկտիկա, Կալինինգրադ... Հայերիս համար այս արարողությունը հատկանշական դարձավ այն առումով, որ ջահը կրողների մեջ առաջիններից մեկը մեր լեգենդար հայրենակիցն էր՝ ստորջրյա լողորդ Շավարշ Կարապետյանը:

Եկեք նորեն հիշատակենք այս մարդու մարզական ու մարդկային սխրանքները՝ 11 անգամ դարձել է աշխարհի ռեկորդակիր, 17 անգամ՝ աշխարհի չեմպիոն, 7 անգամ՝ ԽՍՀՄ չեմպիոն, եւ հիրավի անօրինակ հերոսությունը, երբ նա Երեւանյան լճում 10 մետր խորությամբ խորտակված տրոլեյբուսից հանեց 20 մարդու:

Կարապետյանին հիանալի գիտե խորհրդային մեր սերունդը: Հուսանք, որ նոր սերունդն էլ է ճանաչում նրան: Շավարշին չի կարելի մոռանալ: Ջահակրության առիթով ռուսաստանյան շատ լրատվամիջոցներ հարցազրույցներ ունեցան նրա հետ, ավելի հաճախ վերհիշվեցին ջրածածկ եղած փոխադրամիջոցից մարդկանց փրկելու աննախադեպ իրադարձության դրվագները: Ի դեպ, նրա երթի ժամանակ ջահի կրակը մարեց: «Գուցե օլիմպիական կրակը չհանգավ, գրել էր մոսկովյան թերթերից մեկը, այլ խոնարհվեց Շավարշ Կարապետյանի արիության ու վեհության առջեւ»: Սակայն բանաստեղծական այս պատկերի հետ մեկտեղ հնչում էին նաեւ պրոզային հարցեր ու տարակուսանքներ՝ ինչո՞ւ է այս լեգենդար մարդը, ազգային հերոսը ապրում ոչ թե իր հայրենիքում, այլ Ռուսաստանում, եւ հարկադրաբար զբաղվում կոշիկի արտադրության մասնավոր ձեռնարկչությամբ:

Իրոք, ինչո՞ւ են Հայաստանից արտագաղթում նույնիսկ Կարապետյանի նման վառ անհատականությունները: Արդյոք սա հայոց երկրի ողբերգությունը չէ՞: Մի՞թե անկախությունը այդքան անհրապույր է դարձրել մեր նախնյաց հողը: Ժամանակ առ ժամանակ Հայաստանի հեռուստատեսությամբ պաթետիկ հայտարարություններ են հնչում, թե արտագաղթողները դավաճան են, հայրենադավ: Շավարշ Կարապետյանին կարելի՞ է համարել դավաճան: Դավաճա՞ն են «Արարատի» նույնքան հանրաճանաչ ֆուտբոլիստները, որոնց մի մասն էլ է հայտնվել արտասահմանում: Իսկ գուցե դավաճան են նրանք, ովքեր պատասխանատու լինելով արտագաղթի համար, ըստ էության թքած ունեն այդ գործընթացի վրա առհասարակ: Որանց համար մեկ է, թե ով է հեռանում երկրից:

Ռուսաստան տեղափոխվող հայերի վիճակը ավելի կբարդանա բիրյուլյովյան վերջին իրադարձությունների հետեւանքով: Ապօրինի ներգաղթածների բացահայտման ներկա շուրջկալներին անպայման կփոխարինեն իրավական եւ ուժային բնույթի խիստ միջոցառումներ: Ամենայն հավանականությամբ՝ Սոչիի օլիմպիադայից հետո՝ ավելորդ միջազգային ասեկոսներից խուսափելու նկատառումով: Լավ, Կարապետյանի նման մարդիկ շատ քիչ են եւ կարող են իրենց հաստատել նաեւ նոր միջավայրերում (մեր հայրենակիցը Ռուսաստանի ստորջրյա լողի ասոցիացիայի պատվավոր նախագահն է): Բայց ի՞նչ պիտի անեն Հրաչյա Հարությունյանի նման խեղճ մարդիկ: Նորից վերադառնա՞ն Հայաստան, որտեղ ոչինչ չի փոխվում:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Էլեկտրոնային եղանակով ներմուծված ապրանքները կմաքսազերծվեն փոստային բաժանմունքներում

Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ առաջարկեց ՊԵԿ մաքսային վարչարարության ռազմավարության 2013-2014թթ. ծրագրի մեջ ներառել Մաքսային միության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները: Ծրագիրը ներկայացնում էր պետեկամուտների կոմիտեի փոխնախագահ Վախթանգ Միրումյանը, որին էլ նիստից հետո լրագրողները հարցեր ուղղեցին այս փաստաթղթի մասին: Պատասխանելով դրանց՝ նա նշեց, որ փաստաթուղթը առաջին հերթին վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից փոստային եւ սուրհանդակային ծառայությունների միջոցով ապրանքների ներմուծմանը:

Ըստ Վախթանգ Միրումյանի՝ ներդրվելու է ընթացակարգ, որպեսզի Հայաստանի քաղաքացիները, որոնք էլեկտրոնային եղանակով առեւտուր կանեն, կարողանան պարզեցված եղանակով կատարել մաքսազերծում: «Օրինակ՝ մենք նախատեսում ենք փոստային բաժանմունքներում ունենալ ներկայացուցիչ, որոնք իրականացնելու են մաքսային գործառույթ: Այսինքն, մեր քաղաքացիները այլեւս կարիք չեն ունենա գնալու համապատասխան մասնագիտացված մաքսատուն ու կատարել մաքսազերծում: Մաքսազերծումը կատարվելու է հենց փոստային բաժանմունքներում», հայտնեց ՊԵԿ փոխնախագահը:

Ինչ վերաբերում է մաքսային արժեքը որոշելուն, ապա դա կատարվելու է ոչ թե ընդհանուր կանոններով, այլ պարզեցված սուրհանդակային հայտարարագրերով, որտեղ նշված կլինեն ապրանքային արժեքները: «Այսինքն՝ միանգամից մի վճարում է կատարվելու», պարզաբանեց Վախթանգ Միրումյանը, միաժամանակ նշելով, որ փոստային առաքումները պետք է արվեն այնպես, որ չվերածվեն առեւտրային քանակությունների:

**Ա. Ս.**

# 72 մլն դոլար վարկ Հայաստանին

Միջազգային զարգացման ընկերակցության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ Հայաստանը կնքել է 72 մլն դոլարի վարկային համաձայնագիր: Ներկայացնելով համաձայնագիրը կառավարության հաստատմանը՝ այդ մասին ասաց ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը: Գումարը կուղղվի Հայաստանում մրցակցության ուժեղացմանը, գործարարությամբ զբաղվելու ոլորտում տեսչական մարմինների բարեփոխմանը, պետական կառավարման մարմինների թափանցիկության բարելավմանը: Բարեփոխումներ կիրականացվեն նաեւ հարկաբյուջետային, բնապահպանական, ընտանեկան նպաստների ոլորտներում:

**Ա. Ս.**

# Նապոլեոնի կտակի միակ պատճենը վաճառվեց աճուրդում

Ֆրանսիայում աճուրդի է հանվել Նապոլեոն Բոնապարտ կայսեր կտակի միակ պատճենը, հաղորդում է Fox News հեռուստաալիքը:

Նշվում է, որ փաստաթուղթը վաճառվել է 357 հազար եվրոյով: Դա մոտավորապես կրկնակի գերազանցում է այն գումարը, որ ակնկալում էր ստանալ Druout աճուրդային կենտրոնը:

Գնորդը պարզաբանել է, որ ինքը ցուցադրության չի դնելու կտակի պատճենը, քանի որ այն ձեռք է բերել անձնական հավաքածուի համար: Գնորդը չի հրապարակել իր անունը: Հայտնի է միայն, որ նա ֆրանսիացի տղամարդ է:

Նապոլեոնի ձեռքով գրված կտակի բնօրինակը պահվում է Փարիզում՝ Ֆրանսիայի ազգային արխիվում: Կտակը պատճենահանել է նոտարիուսը: 1821 թ. ապրիլի 16-ով թվագրված փաստաթղթում Նապոլեոնը խնդրում էր իրեն թաղել Սենի ափին: Նա սեփական կարողության կեսը կտակում էր իր արշավանքներին մասնակցած ֆրանսիական բանակի սպաներին:



Նապոլեոնը մահացել է 1821 թ. մայիսի 5-ին Սուրբ Հեղինե կղզում, ուր նրան իբրեւ ռազմագերու աքսորել էին անգլիացիները 1815 թ. Վառլոյի ճակատամարտում ֆրանսիացիների կրած պարտությունից հետո: Նապոլեոնի մահից հետո նրա աճյունը տեղափոխվել է Ֆրանսիա: Նա թաղված է Սենի ափին գտնվող Հաշմանդամների տանը:

**Պ. Ք.**

# Ա. Աշոտյանն ու Վ. Սադովնիչին քննարկել են ՄՊՀ Երեւանի մասնաճյուղի բացման եզրափակիչ հարցերը

Մոսկվայում տեղի է ունեցել պաշտոնական այցով ՌԴ-ում գտնվող ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հանդիպումը Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վ. Սադովնիչիի հետ: Քննարկվել են Երեւանում Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացման եզրափակիչ փուլի հետ կապված հարցեր:

Նախարար Ա. Աշոտյանը ներկայացրել է Հայաստանում կրթության եւ գիտության ոլորտներում բարեփոխումների ընթացքն ու խնդիրները, այդ համատեքստում անդրադարձ է եղել նաեւ միասնական կրթական տարածքի ձեւավորմանը:

Ակադեմիկոս Վ. Սադովնիչին վերահաստատել է Հայաստանի Հանրապետության հետ կրթական եւ գիտական համագործակցության ընդլայնման պատրաստակամությունը, միաժամանակ ընդգծելով, որ Մոսկվայի պետական համալսարանը պատրաստ է ապահովել միջազգային բարձր չափանիշներին համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթության կազմակերպումը Հայաստանում:

# ԱՄՆ դրամաշնորհները կտրամադրվեն ոչ թե ՀԿ-ներին, այլ ՍՊԸ-ներին

Երեւանում ԱՄՆ դեսպանատունը յուրաքանչյուր տարի Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի հետ համատեղ հայտարարում է շրջանավարտների դրամաշնորհների մրցույթ, որին կարող են մասնակցել ԱՄՆ շրջանավարտները որպես անհատներ եւ որպես ՀԿ ներկայացուցիչներ:

Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի առաջարկով այժմ ԱՄՆ դեսպանատան հետ քննարկվում է 2014 թվականի դրամաշնորհները ոչ թե ՀԿ-ներին, այլ ՍՊԸ-ներին եւ բիզնես ծրագրեր ներկայացնող շրջանավարտներին հատկացնելու հնարավորությունը:

Նպատակը շրջանավարտների կողմից ստեղծված նորաստեղծ բիզնեսներին աջակցելն է: Այս առաջարկը դեռեւս սաղմնային քննարկումների փուլում է: Տեղեկացանք ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Ինչո՞ւ են հնարավոր էշերի կամ շշերի «հեղափոխությունները»

1-ին էջից

Հիմա սրա համար ի՞նչ է պետք՝ կա՞մք, խե՞լք, ո՞ւժ, թե՞ պարզապես երկրի զգացողությունը մեջը ոստիկանություն: Կամ եթե երեք եւ ավելի օր մարդը խոսում է բենզինի շշերից, լավ, էլ ո՞րքան ժամանակ է պետք ոստիկանին՝ խելք աշխատեցնելու եւ կանխելու համար տեղի ունեցողը. բա որ ասում են՝ օպերատիվ տեղեկատվություն, բա էլ օպերատիվ տեղեկատվությունը ո՞նց է լինում, հրապարակային մարդը հայտնում էր բենզինի շշերի մասին, էլ ինչ է պետք ոստիկանության համապատասխան բաժանմունքին՝ ուղեղ աշխատեցնելու եւ կանխելու, բռնության կոչը բռնություն չդառնելու համար, ընդ որում՝ դա անելով առանց բռնության, օրենքի շրջանակում եւ պարզապես անվտանգ օպերացիայով դեռ նոյեմբերի 5-ից առաջ: Միգուցե՝ հրահանգ, եւ ինչո՞ւ: Ի՞նչ էր պետք հասկապես լսեցնել ու ցույց տալ: Մանավանդ՝ ոստիկանապետն ասում է. «Մեր տեսադաշտում են եղել ամբողջ գործողությունները, եւ ոստիկանությունը գործել է ըստ մշակված ծրագրի»: Ի՞նչ է՝ այդ ծրագրով պետք է սպասեին, մինչեւ Ազատության հրապարակում շշեր վառվեին կամ մահակներ գործադրվեին:

Հիմա վերն ասվածի ֆոնին գանք այն մտքերին, որն ասել է ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը «Ազատություն» ռադիոկայանին՝ բերման ենթարկված Շանթ Հարությունյանի (նաեւ ազատամարտիկ Վարդան Վարդանյանի) հանդեպ անձամբ բռնություն կիրառելու վերաբերյալ հարցին պատասխանելով: Հիշեցնենք, որ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը ձերբակալվածների պահման վայր այցելությունից հետո համացանցում հայտարարել էր, թե Շանթ Հարությունյանն ասել է՝ Կենտրոնի ոստիկանությունում իր նկատմամբ բռնություն են գործադրել ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն ու փոխոստիկանապետ Հունան Պողոսյանն անձամբ, բռնության է ենթարկվել նաեւ ազատամարտիկ Վարդան Վարդանյանը. «Տրամաբանության բացակայություն եմ տեսնում: Նախ եւ առաջ, հազարից ավելի մարդ կար էնտեղ՝ (ոստիկանության Կենտրոնականի) բաժնի շենքում, երկրորդը՝ եթե էս երկու տարիների ընթացքում նման դեպք է եղել, ուրեմն՝ սա էլ կարող է իրականությանը համապատասխանել: Իհարկե, չի եղել եւ չէր կարող լինել նման դեպք: Հանձնաժողով, մեկուսարան ընդունել, բոլոր տեղերը ամեն ինչ ֆիքսվում է... Սա նույնպես հիվանդ երեւակայության արդյունքն էր: Ի՞նչ եք պատկերացնում հետո. ոստիկանապետը իրեն թույլ տար նման բան անել՝ Շանթից բան կմնա՞ր: Որտե՞ղ է տրամաբանությունը: Բացի դրանից՝ էնտեղ եղել են պատգամավորներ եւ այլն», ասել է Վ. Գասպարյանը: Այ քեզ բան, Շանթի՝ բան չմնալու մասով ի՞նչ է նկատի ունեցել ոստիկանապետը՝ արդյո՞ք սեփական մկանների ատլետիկ վիճակը, թե՞ ոստիկանության հավաքական մկանների, եւ արդյո՞ք սա այն պատասխանն է, որ ակնկալվում է ոստիկանապետից: Առհասարակ բռնության կոչեր հնչեցնողի նկատմամբ բռնություն կիրառելու մասին խոսող ոստիկանը չի հավասարվում այդ նույն կոչերը հնչեցնողներին, եւ մեր հասարակությանն արդյո՞ք պետք են նույն հարթությունում գտնվող հանցագործ եւ ոստիկան:

Մեր ասածն այն է, որ իսկապես նախ մեր ոստիկանապետը ոչ թե ոստիկան է սոսկ, այլ բարձր պաշտոնյա, որից բարեկրթություն, բացառապես օրենքի տառին համապատասխան գործելակերպով պահվածք է սպասում հասարակությունը՝ առանց հախուռն թանձրացումներ եւ առանց կրքերի. սառը, հաշվարկված, առանց գողական բառուբանի եւ միայն ինտելեգենտ պահվածք: Եվ ապա՝ ընդհանրապես ոստիկանությունից մեռանք սպասելով գրագետ, իրադարձությունների հետեւից քարշ չեկող, բարեկիրթ, խելքից եւ ոչ թե բռունցքից բխող գործողություն: Երբ կունենանք՝ դեռեւս անհայտ է: Իսկ թե բռնություն է կիրառվել Շանթի հանդեպ, չի կիրառվել, հերքվում է դա, թե ոչ, էլի ենք ասում, այստեղ կարեւորը հասարակության վստահությունն է, որ չկա: Մեր ոստիկանը վաղուց ժամանակն է, որ հասարակության վստահությունը վաստակի: Իսկ թե ինչու են հնարավոր Շանթ Հարությունյանի նախաձեռնած «հեղափոխությունը», մեր իշխանությունները լավ կլինի դրա մասին մտածեն:

Հիշեցնենք, որ ոստիկանություն բերման ենթարկված 38 անձանցից 20-ը ձերբակալվել են՝ Հարությունյան Շանթ, Տերտերյան Աշոտ, Ավետիսյան Ավետիս, Պետրոսյան Տիգրան, Պողոսյան Ալեք, Պետրոսյան Լիպարիտ, Հովհաննիսյան Արմեն, Հարությունյան Հայկ, Վարդանյան Վարդան, Առաքելյան Միսակ, Մկրտչյան Դավիթ, Մարգարյան Ալբերտ, Գրիգորյան Անուշավան, Մխիթարյան Մխիթար, Ղազարյան Հովհաննես, Մնացականյան Սեւակ, Մկրտչյան Վահե, Հովհաննիսյան Մկրտիչ, Հովիկյան Մանուկ, Մխիթարյան Արման: Գործով ներգրավվել է 18 վկա:

# Հնագետները Դվինի տեղավայրում...



1-ին էջից

**Արեւմտյան հատվածում բացվել է արաբական շինության պատի մի հատված, արեւելյան հատվածը եղել է թաղումներով պատված եւ այդտեղ պեղումները դադարեցվել են»,- տեղեկացրեց արշավախմբի ղեկավարի տեղակալը: Հնավայրի հարավային բուրգում պարսպապատին կից բնակելի թաղամաս է բացվել (11-13 դդ.), շինություններում բազմաթիվ թոնիրներ են եղել զետեղված:**

**Ուսումնասիրություններ են կատարվել նաեւ հնավայրի հյուսիսարեւմտյան լանջին, որտեղ, Հակոբյանի խոսքով, եզակի եւ հետաքրքրական աղյուսաշեն շինություն է բացվել՝ գիպսե հարդարանքով եւ հախճապակե թասերով: Արշավախումբն աշխատանքները կվերսկսի 2014-ին, պեղումները այս հատվածում եւս կշարունակվեն, հնագետի համոզմամբ՝ մի շարք վիճահարույց հարցերի պատասխաններ գտնելու նկատառումով: Պեղման աշխատանքներ են ընթացել նաեւ բլրի հյուսիսային գագաթին, որտեղ անտիկ դարաշրջանի շերտեր են բացվել:**

**Հայտնաբերված վաղ բրոնզի, վաղ երկաթի դարաշրջանով թվագրվող իրերն ու առարկաները՝ խեցեղեն, դրամների գտածոներ, մետաղներ, կհանձնվեն վերականգնողական լաբորատորիա: Առավել արժանիները, ըստ հնագիտական արշավախմբի ղեկավարի, հետագայում կհանձնվեն Հայաստանի պատմության թանգարանին:**

**Դվինն ունեցել է ժամանակի զարգացած քաղաքներին բնորոշ քաղաքաշինական նկարագիր: Ավերակների վերածված նախկին ծաղկուն ու զարգացած քաղաքը Միջնադարյան Հայաստանի բարձր մշակույթի պատմական վկան է: Զարգացած են եղել արհեստագործական ճյուղերը, կավագործությունը, մշակույթը, շինարարությունը, քաղաքը նաեւ առեւտրային ճանապարհների խաչմերուկ է եղել: Տարբեր ժամանակների պեղումներով բացվել են քաղաքի միջնաբերդի տարածքի եւ կենտրոնական թաղամասի պաշտամունքային եւ աշխարհիկ ճարտարապետական շինությունների մնացորդներ:**

**Միջնադարյան Հայաստանի Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են Վերին Դվին, Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Այգեստան գյուղերի տարածքներում, Երեւանից մոտ 30 կմ հարավ: 1937 թ.-ից Դվինի ավերակներում ընդմիջումներով հնագիտական պեղումներ են իրականացվել Ն. Մառի, Խ. վարդապետ Դադյանի, Ս. Տեր-Ավետիսյանի, Կ. Ղաֆադարյանի, Ա. Քալանթարյանի կողմից: Այս տարի եւս բացառություն չէր: Շուրջ երկու ամիս հնավայրի տարածքում ուսումնասիրություններ են կատարել ՀՀ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի հինգ աշխատակիցներ (արշավախմբի ղեկավար Հուսիկ Մելքոնյան, Ֆրինա Բաբայան, Աղավնի Ժամկոչյան՝ միջին դարերի հնագիտության բաժնից) եւ Գայանե Քոչարյանը՝ անտիկ հնագիտության բաժնից:**

## ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐՆԵՐ

# Գրքի շնորհանդես Դանիայում

Նոյեմբերի 6-ին Դանիայում ՀՀ դեսպանատանը տեղի ունեցավ դանիացի գրող Քեյթ Ղոյստայի «Կարեն Եփփեն եւ հայ ժողովուրդը. մի կյանք, մի կանչ» վերնագրով գրքի շնորհանդեսը, որին ներկա էին հայ համայնքի ներկայացուցիչներ, դանիացի մտավորականներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Դանիայում ՀՀ դեսպան Հրաչյա Աղաջանյանը նշելով, որ շնորհանդեսի համար ընտրված օրը պատահական չէ. ուղիղ մեկ տարի առաջ նույն օրը դանիացի մարդասեր եւ «հայ որբերի մայրիկ» Մարիա Յակոբսենի 130-ամյակն էր, եւ այդ նույն օրը Կոպենհագենի Թագավորական գրադարանում բացվել էր «Հայոց ցեղասպանությունը եւ սկանդինավյան արձագանքը» խորագրով ցուցադրությունը:



Դեսպանն իր խոսքում հիշատակեց, որ վերջերս Դանիայի հեղինակավոր «Kristeligt Dagblad» թերթում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակված մի քանի հոդվածներից մեկը կրում էր «Հայոց պատմությունը մեր պատմությունն է» վերնագիրը՝ հավելելով, որ Մարիա Յակոբսենի եւ Կարեն Եփփեի միջոցով է, որ հայ ժողովրդի պատմությունը շատ դանիացիներ համարում են նաեւ իրենց սեփական պատմության մի մասը: Դեսպանն ավելացրեց, որ նրանց նվիրումը հայ ժողովրդին անսահման է եղել եւ նրանց մասին նոր վկայությունները հնարավորություն են տալիս մեզ բոլորիս՝ ծանոթանալու նրանց գործունեության անծանոթ էջերին:

Դեսպան Հրաչյա Աղաջանյանի խոսքից հետո իր գրքի եւ գրելու մտահղացման մասին խոսեց հեղինակը՝ Քեյթ Ղոյստան: Նա պատմեց, որ, լինելով Սիրիայում, տեղեկացել է Կարեն Եփփեի գերեզմանի մասին, սակայն չի հասցրել այցելել նրա շիրիմին եւ այդ նպատակով երկրորդ անգամ է մեկնել Սիրիա: Նա սկսել է ուսումնասիրել Կարեն Եփփեի կյանքը եւ գործունեությունը, այցելել է նրա ծննդավայր՝ Գյուլինգ եւ ծանոթացել տեղական արխիվի, ինչպես նաեւ Դանիայի Թագավորական գրադարանում առկա Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերին: Գրողը մեկնել է նաեւ Գերմանիա՝ Յոհաննես Լեփսիուսի եւ Կարեն Եփփեի միջեւ նամակագրական նյութերն ուսումնասիրելու համար:

Շնորհանդեսի վերջում ներկա գտնվողները բազմաթիվ հարցեր եւ շնորհակալության խոսքեր ուղղեցին Քեյթ Ղոյստային:

Տեղեկանք: «Կարեն Եփփեն եւ հայ ժողովուրդը. մի կյանք, մի կանչ» գիրքը տպագրվել է 2013թ. մայիսին դաներեն լեզվով:

Այն պատմում է Կարեն Եփփեի կյանքի եւ գործունեության մասին: Նախորդ դարասկզբում Դանիայում գործող «Հայերի դանիացի բարեկամներ» մարդասիրական կազմակերպությունից լսելով սահմռկեցուցիչ պատմություններ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված հալածանքների ու կոտորածների մասին Կարեն Եփփեն որոշում է գնալ եւ օգնել կոտորածներից ողջ մնացածներին: 1903թ. Կարեն Եփփեն ժամանում է Ուրֆա եւ զբաղվում որբ երեխաների խնամքով եւ ուսուցմամբ: Նա մնում է Ուրֆայում եւ Հայոց ցեղասպանության ականատեսն է լինում: 1921 թվականին նա տեղափոխվում է Հալեպ՝ Հայոց ցեղասպանությունից փրկված երեխաներին խնամելու եւ գերության մեջ գտնվող կանանց ազատագրելու համար եւ այնտեղ է մնում մինչեւ իր կյանքի վերջը:

Հալեպում Կարեն Եփփեի հիմնած եւ իր անունը կրող ազգային ճեմարանում ուսում են ստացել հազարավոր հայորդիներ:

**Սրբագրում եւ խմբագրում**

**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**

**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03:**

# Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակի խորհուրդը

Անցած շաբաթ Մոսկվայի «Պրեզիդենտ» հյուրանոցում տեղի ունեցավ «Գյուլիստանի խաղաղության պայմանագիրը. պատմություն եւ արդիականություն» խորագրով գիտապրակտիկ կոնֆերանսը, որի կազմակերպիչներն էին ԱՊՀ երկրների ինստիտուտը եւ Ռուսաստանի հայերի միությունը: Կոնֆերանսի նպատակն էր ընդգծել այդ իրադարձության պատմական նշանակությունը Հարավային Կովկասի ժողովուրդների եւ Ռուսաստանի հետ նրանց հարաբերությունների համար: Կոնֆերանսի կազմակերպիչ, ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն, հայկական քաղաքական եւ հասարակական շրջանակներում հայտնի, Պետական դումայի նախկին պատգամավոր Կոնստանտին Զատուլինն ընդգծեց, որ կոնֆերանսի խնդիրներից մեկն էլ Գյուլիստանի պայմանագրի արդիականության եւ այժմեականության հետազոտության առարկա է լինելու: Բայց այն հանգամանքը, որ 18-րդ դարի սկզբից սկսած, Իսրայել Օրու, Լազարյան գերդաստանի ներկայացուցիչների, Հայոց Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի, ընտրված, բայց չօծված կաթողիկոս Հովսեփ Արղությանի եւ հատկապես Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի ու նրանց գաղափարակիցների ջանքերով Ռուսաստանյան կայսրության հետաքրքրությունը ուղղվել է դեպի Հարավային Կովկաս եւ Հայաստան, վճռական դեր է կատարել հայ ժողովրդի դեմոգրաֆիական զարգացման եւ տնտեսական ռեսուրսների բազմապատկման համար: Այդ նշանակությունն այնքան մեծ եւ անվիճելի է հայ իրականության մեջ, որ նույնիսկ ռուսական կայսերապաշտության եւ խորհրդային կոմունիզմի ամենախիստ քննադատները ստիպված են ընդունել, որ Ռուսաստանյան կայսրության

Հայաստանում եւ Արցախում հայերի եկվոր ու վերաբնակեցված լինելու մասին: Ուրանալով այն ակնհայտ ճշմարտությունը, որ Հարավային Կովկասի ազգաբնակչության հավասարակշռությունները խախտվել են 17-րդ դարի սկզբում շահ Աբբաս Առաջինի, 18-րդ դարի առաջին կեսին Նադիր շահի եւ 18-րդ դարի վերջում Աղա Մահմեդ խանի արշավանքների եւ դրա հետեւանքով հայերի զանգվածային տեղահանությունների եւ բռնի արտագաղթի հետեւանքով, հենվելով լոկ 19-րդ դարի առաջին կեսի փաստաթղթային տեղեկությունների վրա՝ պնդում են, թե հայերը Արեւելյան Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում հայտնվել են ռուսական քաղաքականության շնորհիվ: Այս կեղծիքը դարձել է զենք՝ հիմնավորելու համար, որ Արեւելյան Հայաստան հասկացությունն ընդհանրապես վաղուց կորցրած է եղել իր պատմա-

րություն ստացավ: Սակայն մոսկովյան այդ կոնֆերանսում ելույթ ունեցած ճանաչված ռուս ռազմական եւ քաղաքական պատմության մասնագետների ելույթները ցույց են տալիս, որ Ռուսաստանում 200-ամյա պայմանագրի խաղացած հետեւանքները ոչ միայն շատ լավ են հիշում ու հասկանում, այլեւ հորդորում են իրենց իշխանություններին հավատարիմ մնալ հայ-ռուսական դաշինքի եւ Հարավային Կովկասում (ըստ ռուսների՝ Անդրկովկասում) ռուսական ներկայության ձեւավորված ավանդույթներին:

### Ձեւավորված ավանդույթների արդիական հնչողությունը

Կոնֆերանսին ներկա ռուս ճանաչված դիվանագետներից մեկը հարցնում էր՝ ընդունելի՞ է արդյոք Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ընդգրկված

Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակը Դաղստանում ներկայացվեց իբրեւ Ռուսաստանին միանալու հոբելյան: Ադրբեջանում հայտարարում են, որ իրենց քաղաքական անկախությունը կենսագործելու են չմիավորման շարժման մեջ գտնվելով եւ հավասարահեռ քաղաքականություն են վարելու Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ: Իրականում Ադրբեջանի նավթային եւ գազային ռեսուրսները հնարավորություն են տալիս նրան որպես ցանկալի առեւտրատնտեսական գործընկեր ներկայանալու ցանկացած խոշոր ուժային կենտրոնի եւ մասնավորապես նաեւ Ռուսաստանի համար: Հայաստանի պարագայում Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերության, ռազմաքաղաքական դաշինքի եւ դրանից բխող փոխհարաբերությունների հիմքում ընկած է մեր պատմության անվիճելի դասերի իմացությունը, որը

թյունն է Կովկասյան տարածաշրջանի համար, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման տեսանկյունից:

Կոնֆերանսին մասնակցում էին մոսկովյան հայտնի պատմաբաններ, քաղաքագետներ, դիվանագետներ, հյուրեր հյուսիսկովկասյան հանրապետություններից, ինչպես նաեւ ինը մարդուց բաղկացած հայաստանյան եւ երեք մարդուց բաղկացած արցախյան ներկայացուցչական պատվիրակությունները: Ամբողջ օրը տեւած կոնֆերանսում հնարավորություն տրվեց լսելու Գյուլիստանի պայմանագրի պատմական եւ քաղաքական ասպեկտներին, հայ-ռուսական հարաբերությունների պատմությանն ու ժամանակակից խնդիրներին, ինչպես նաեւ Ռուսաստանի կովկասյան քաղաքականության ընթացիկ հարցերին վերաբերող զեկուցումներ: Կոնֆերանսին հրավիրված չէին Ադրբեջանի ներկայացուցիչները, սակայն միանգամից երեք ադրբեջանական լրատվամիջոցներ հավատարմագրվել էին նախապես եւ ներկա գտնվեցին մինչեւ նրա աշխատանքի ավարտը: Ներկաները ափսոսանք հայտնեցին նաեւ, որ կոնֆերանսին չեն մասնակցում Վրաստանի պատվիրակները, այնինչ ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման գործընթացը մեծապես հետաքրքրում է թե ռուս, թե հայ քաղաքագետներին: Ստորեւ փորձենք ի մի բերել տարբեր ելույթների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ մոսկովյան կոնֆերանսը այն սահմանափակ թվով հարթակներից մեկը եղավ, որտեղ փորձ արվեց արդիական հնչողություն հաղորդելու 200 տարի առաջ հայ, ադրբեջանցի եւ ռուս ժողովուրդների կյանքում կարեւոր դեր խաղացած իրադարձությանը:

### Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերի անանց խորհուրդը

Ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներն ու տպագիր հրատարակությունները ինչ ասես, որ չեն մոգոնել Արեւելյան

քաղաքական բովանդակությունը, որովհետեւ մահմեդական տարրը կազմել է բնակչության մեծամասնությունը: Պատմական փաստաթղթերը աներկբա վկայում են, որ ռուսական քաղաքականության համար քրիստոնյա տարրի առկայությունը նոր գրաված տարածքներում հատկապես եղել է շատ կարեւոր, եւ այդ նպատակով ռուս վերաբնակներ Հարավային Կովկաս հատկապես բերվել են: Հայերը մյուս հին քրիստոնյաների հետ միասին կազմել են ռուսներից հետո իրենց կարեւորությամբ բնակչության երկրորդ խումբը, որի վերաբնակեցման քաղաքական որոշումը կենսագործել է, մասնավորապես Իրանում Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Գրիբոյեդովը: Շատ կարեւոր է հասկանալ, որ Ռուսաստանյան կայսրությանն անցած վայրերում թե Պարսկաստանից, թե Օսմանյան կայսրությունից վերաբնակեցված մոտ 160 հազար հայերը հաստատվել են այն բնակավայրերում, որտեղ դրանից 200 տարի առաջ ապրել են հայեր, որոնք, ինչպես արդեն ասացինք, տեղահանվել եւ բռնագաղթվել են: Օբյեկտիվորեն պատմական այս ճշմարտությունը գալիս է եւս մեկ անգամ վկայելու, որ Արեւելյան Հայաստանի վերակենդանացումը եւ հայության զարգացումը հնարավոր է եղել միայն Գյուլիստանի (1813թ.) եւ Թուրքմենչայի (1828թ.) պայմանագրերի շնորհիվ: Հենց դրա համար է հայկական պատմական մտածողության մեջ արմատավորված այն ճշմարտությունը, որ արեւելահայության հարությունը հնարավոր եղավ միայն ռուսական քաղաքականության շնորհիվ: Այստեղ վերանում ենք նույնքան ճշմարիտ, բայց երկրորդական նկատվող այն իրողություններից, որ ցանկացած գաղութի բնակչության մեջ միշտ կլինեն ընդվզումներ եւ դժգոհություններ անարդար կառավարումից, օտար ազդեցությունից եւ զարգացումը սահմանափակող կապանքներից: Այս խոսակցությունները բոլոր ժամանակներում, բոլոր գաղութներում եղել են եւ լինելու են, եւ նրանց ճշմարտացիության հանգամանքը մշտապես հետա-

եւ Խորհրդային Միության կազմում հայությունը ոտքի կանգնեց, ուղղեց իր մեջքը եւ ձեւավորվեց իբրեւ պետականություն կերտող ազգ:

Կարծում եմ, որ հենց սա էր ադրբեջանցիների քար լռության եւ այդ թեմայով չարախոսությունների միակ պատճառը, որովհետեւ ադրբեջանցիները շատ լավ հասկանում են, որ Գյուլիստանի պայմանագրի պատմական նշանակության մասին խոսելիս հայերը ներկայանում են իբրեւ ռուսների բնական եւ հավատարիմ դաշնակից, մի ժողովուրդ, որն իր վերածնության հանգամանքով արդյունք է Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերի: Միայն ափսոսալ կարելի է, որ եթե ընդամենը 44 տարի առաջ Թուրքմենչայի պայմանագրի 150-ամյակի առիթով նախկին Խորհրդային Հայաստանի գիտնականները տասնյակ, եթե ոչ հարյուրավոր գրքեր ու հոդվածներ են հրատարակել, ապա այսօր մեր հասարակությունը քննարկում էր լոկ մեկ շատ հետաքրքրական եւ մեծ վիճաբանությունների առարկա դարձած աշխատություն՝ Զորի Բալայանի նամակը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին: Այս վերլուծականում ես կուզենայի ոչ թե քննարկել իմ ավագ գրչակից ընկերոջ նամակի բովանդակությունն ու քաղաքական նշանակությունը, այլ ցավով արձանագրել, որ մեր պատմաբանների ձայնը Գյուլիստանի պայմանագրի տարեդարձի առիթով համարյա չլսվեց: Գուցե պատճառներից մեկն այն է, որ խորհրդային ժամանակների նշանավոր պատմաբանների հետնորդները մեր ժամանակներում այլ թեմաներով եւ այլ խնդիրներով են զբաղված եւ համարում են, թե ուսումնասիրելու առանձնապես բան չի մնացել: Կամ գուցե այլեւս պետություն ունեցող հայ ազգի շատ մտավորականների դուր չի գալիս հիշել այն ժամանակները, երբ ֆիզիկական ոչնչացումից մազապուրծ արեւելահայությունը, քաղաքական գործոն նկատվելով ռուսական իշխանությունների կողմից, հարություն առնելու եւ ամրանալու բացառիկ հնարավո-

կողմերի համար ռուսական ազդեցությունը եւ բացառիկ դերակատարությունը՝ նկատի ունենալով, որ պատմական հանգամանքների բերումով Ռուսաստանը որոշակիորեն առաքելություն եւ պատասխանատվություն ունի, որի վկայություններից մեկը Գյուլիստանի պայմանագիրն է: Եվ իսկապես, անզեն աչքով էլ տեսանելի է, որ համեմատած Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ՝ Ռուսաստանի ազդեցությունը եւ որոշակիորեն պատասխանատվությունը հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի նկատմամբ շատ ավելի մեծ են: Իրականում 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո Ռուսաստանը ցույց տվեց, որ ինքը ոչ միայն Կովկասով հետաքրքրված մեծ պետություն է, այլեւ ուղղակիորեն տարածաշրջանի բաղկացուցիչ մասն է՝ առանց որի տարածաշրջանում քաղաքական եւ տնտեսական լուրջ փոփոխություններ ուղղակի հնարավոր չեն: Բայց արդի ճշմարտություններից մեկն էլ այն է, որ այն ազդեցությունը, որը Ռուսաստանն ունի Հայաստանի վրա, չունի ոչ Ադրբեջանի, ոչ էլ Վրաստանի դեպքում: Թեկուզ այն հանգամանքը, որ, ի տարբերություն Հայաստանի, ոչ Ադրբեջանը եւ ոչ էլ Վրաստանը չեն ցանկանում անդամակցել Մաքսային միությանն ու ընդգրկվել Եվրասիական ինտեգրացիայի գործընթացներում, խոսում է այն մասին, որ Հարավային Կովկասում ամբողջությամբ վերցրած, մոտակա ժամանակներում միայն ռուսական ներգործությամբ եւ ազդեցությամբ որոշումներ չեն ընդունվելու: Թե ԱՄՆ-ը, թե Եվրոպական միությունը դիտարկելու են Մաքսային միության տարածումը Հարավային Կովկասում որպես Ռուսաստանի ծավալման փորձ եւ ձգտելու են հավասարակշռել այդ ծավալումը իրենց ներկայության մեծացմամբ: Այս մրցության մեջ քաղաքական նախապատվությունները, ֆինանսատնտեսական հարցերը, մշակութային ազդեցությունները եւ բազմաթիվ այլ խնդիրներ դառնալու են սրված քաղաքական զգացողությունների պատճառ:

մեզ տանում է դեպի հոգեւոր, աշխարհայացքային, արժեհամակարգային կատեգորիաների դաշտ: Չեմ կարող չհիշել վերջերս հրապարակված մեր սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, ըստ որի հարցվածների 77%-ը Ադրբեջանը համարում է թշնամի, իսկ 74%-ը թշնամի է համարում Թուրքիան: Հարցվածների 82%-ը Ռուսաստանը համարում է թիվ մեկ բարեկամ եւ բնական դաշնակից Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդարացի կարգավորման հարցում: Սա է այն ավանդական պատկերացումների ամբողջականությունը, որը վերջին մեկ դարի ընթացքում առանձնապես չի փոխվել: Ահա թե ինչու մենք կարող ենք համոզված ասել, որ իր կողմնորոշումների եւ նախապատվությունների հարցում մեր ժողովուրդը ավանդապահ է եւ պահպանողական, եւ եթե ոչ ստացված կամ յուրացված գիտելիքների, այլ ավանդական պատկերացումների բերումով այսօր էլ, Գյուլիստանի պայմանագրից 200 տարի հետո, մնում է Ռուսաստանի բնական դաշնակիցը Հարավային Կովկասում: Այս իրողությանը տարբեր պատճառներով կարող են չհամաձայնել բազմաթիվ քաղաքական գործիչներ, սակայն մեզ շրջապատող աշխարհը մեզանից ոչ ավելի վատ, գուցե եւ շատ ավելի լավ գիտե այս ճշմարտությունը:

Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակին նվիրված ոչ մեծաթիվ, բայց նշանակալի իրադարձությունները գալիս են վկայելու, որ պատմությունը կրկնվելու հատկություն ունի, իսկ աշխարհաքաղաքական ծրագրերը եւ մրցակցությունը ձեւավորվում ու հղկվում են տասնամյակների, երբեմն դարերի ընթացքում: Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմաքաղաքական դաշինքը վերջին երկու հարյուր տարիների ընթացքում մեկ սրված, մեկ թուլացած, բայց երբեք չմոռացված պատմական ու քաղաքական իրողությունների արդյունք է:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

# Ռետինե «կալոշներով»՝ դեպի Իլհամ Ալիեւի նստավայր

Virtualaz.org-ի փոխանցմամբ, նման ակցիայի է նախապատրաստվում Բաքվի Սուրախանի շրջանի Բյուլբյուլ ավանի բնակչությունը: Լրատվամիջոցը գրում է, որ «Հեյդար Ալիեւի պողոտայի եւ օդանավակայանի ճանապարհի «երկու կողմերից բարձրացող պարիսպներից 5 քայլ հեռավորության վրա ապրող հազարավոր մարդկանց վիճակն ավելի վատթար է, քան ամենահեռավոր լեռնային գյուղում»:

Լրատվամիջոցը փոխանցել է մի քանի մարդու կարծիք, որոնք գերադասել են, որ իրենց անունները չհրապարակվեն: Նրանցից մեկն ասել է, որ իրենց ավանում «երբեք ասֆալտապատ ճանապարհներ չեն եղել, բայց նախագահական ընտրությունների ժամանակ, երբ խոսվում էր Բաքվի շրջակա գյուղերի ճանապարհների վերակառուցման մասին, հույս արթնացավ», որ իրենց վիճակն էլ նկատի կառնվի:

«Մենք լսել ենք, որ նախագահը 2 մլն մանաթ է հատկացրել Սուրախանի շրջանի փողոցների բարեկարգման համար, բայց թե ինչպես են ծախսվել այդ փողերը՝ տեղյակ չենք: Ստիպված մեր միջոցների հաշվին քարուխճով մի կերպ լցրել ենք փոսերը, բայց եկան «Ազերսու»-ի մարդիկ, իբր ջրագիծ էին անցկացնում, քանդեցին մեր արածը, թողեցին-գնացին, հիմա ավանի մի քանի հազար բնակիչները ստիպված ռետինե կոշիկներ են հանգնում՝ հասնում մինչեւ ասֆալտապատ փողոց, փոխում կոշիկները, նոր քաղաք մտնում»,- պատմել է Բյուլբյուլ ավանի մի բնակիչ:

Նրա ներկայացմամբ՝ հուսահատված մարդիկ որոշել են ռետինե ցեխոտ «կալոշներով երթ անել մինչեւ նախագահի նստավայր, գուցե դրանից հետո մի բան փոխվի»: Կհաջողվի՞ նման երթ կազմակերպել, թե՞ ադրբեջանական «ֆաջարի» ոստիկանությունը դարձյալ մահակածեծի կենթարկի «ազգային արժանապատվության դեմ ոտնձգության կազմակերպիչներին»՝ կարելի է չկասկածել. Ադրբեջանում ընդունված չէ լսել մարդկանց, հոգալ քաղաքացիների տարրական կարիքները:

Հակառակ դեպքում Մաշտաղա ավանի բնակիչները «նախընտրական հանդիպման» ժամանակ Իլհամ Ալիեւին չէին պաղատի «գոնե խմելու ջրի եւ կոյուղու հարցը կարգավորել»: Իսկ որ Ադրբեջանի մայրաքաղաքում վիճակն իրոք խայտառակ է, վկայում է եւս մի փաստ. օրերս Բաքվի Նարիմանովի շրջանում փողոցների փոսալցման աշխատանքներ կատարելուց հետո բնակիչները սարսափով արձանագրել են, որ քայլում են... նախկին հայռուսական գերեզմանատնից բերված շիրմաքարերի վրայով, շիրմաքարեր, որոնց վրա պահպանվում են հանգուցյալների անուն-ազգանունները եւ անգամ լուսանկարները:



Իշխանությունների լկտիությունը հասել է այն աստիճանի, որ երբ Նարիմանովի շրջանի բնակիչները դիմում-բողոքով ներկայացել են Բաքվի քաղաքապետին, վերջինս, ընդունելով նրանց ներկայացուցիչներին, բառացիորեն հայտարարել է. «Իսկ դուք գիտե՞ք, որ Պետրոս Մեծը Պետերբուրգը կառուցել է մարդկային ոսկորների վրա»:

Ահա այդպես՝ Իլհամ Ալիեւի դրածոն Բաքում «բարեկարգում է» հայ-ռուսական գերեզմանատնից բերված շիրմաքարերով, իսկ երբ բնակիչները բողոքում են, իրեն համեմատում է Պետրոս Մեծի հետ: Իսկ Բյուլբյուլ ավանի բնակիչները Հեյդար Ալիեւի պողոտան փակող պարիսպներից այն կողմ դեռ երկար կմնան մոռացության մատնված: Փառք աստծո, Պետրոս Մեծի ժամանակներից մինչեւ իլհամալիեւյան ռեժիմ մարդկությունը հասցրել է «լապտի»-ները փոխարինել ռետինե «կոլոշ»-ներով, որ, իսկն ասած, խորհրդային տարիներին ադրբեջանական «ազգային» տարազի անբաժան մասն էին...

Վ. Ա.

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

# BBC Newsnight. «Սաուդցիները Պակիստանում «գնել են» միջուկային զենք»



**Սաուդյան Արաբիայի իշխանությունները նշանակալի միջոցներ են ներդրել Պակիստանի միջուկային ծրագրում եւ հույս ունեն, որ ամեն պահի կկարողանան Իսլամաբադից միջուկային զենք ստանալ: Այդ մասին հաղորդում է BBC Newsnight հեռուստաալիքը:**

**Բրիտանական հեռուստաալիքի գնահատման համաձայն՝ Էր Ռիադը կարող է ատոմային ռումբ ստանալ ավելի շուտ, քան Թեհրանը:**

**ՆԱՏՕ-ի բարձրաստիճան աղբյուր վկայակոչելով՝ հեռուստահաղորդավար Մարկ Ուրբանը հայտարարել է, որ հետախուզական որոշ տվյալների համաձայն՝ «Սաուդյան Արաբիայի համար Պակիստանում արտադրված» միջուկային զենքը պատրաստ է առաքման:**

**Հաղորդման հեղինակը նաեւ մեջբերում է Իսրայելի ռազմական հետախուզության (ԱՄԱՀ) նախկին ղեկավար Յամոս Յադլինի խոսքերը: Հոկտեմբերին Յադլինը Շվեդիայում անցկացված կոնֆերանսում հայտարարել էր, որ եթե Իրանը ստեղծի միջուկային ռումբ, ապա «սաուդցիները մեկ ամիս էլ չեն սպասի»: «Նրանք արդեն վճարել են ռումբի դիմաց: Պարզապես կմեկնեն Պակիստան եւ կվերցնեն այն, ինչ պետք է վերցնեն», ասել էր իսրայելցի պաշտոնյան:**

**Մարկ Ուրբանը հիշեցնում է, որ դեռ 2009 թվականին Սաուդյան Արաբիայի Ֆահդ թագավորը ԱՄՆ-ի հատուկ հանձնարարությունների դեսպան Դենիս Ռոսին նախազգուշացրել էր, որ եթե Թեհրանը «հատի սահմանագիծը, ապա Էր Ռիադը «կստանա միջուկային զենք»: 2012-ի մայիսին Ռոսը հայտարարել էր, որ Սաուդյան Արաբիան պատրաստ է միջուկային զենքի հետ կապված աշխատանք սկսել:**

**Խոսելով սաուդցիների միջուկային մարտագլխիկների արձակման հնարավոր միջոցների մասին, բրիտանական հեռուստաալիքը բերում է թագավորության հրթիռային ծրագրի զարգացման համառոտ պատմությունը: Մասնավորապես հիշատակվում է դեռ 80-ականների վերջերին Չինաստանից տասնյակ CSS-2 (DongFeng 3, խորհրդային Р-14 հրթիռի նմանակը) բալիստիկ հրթիռների գաղտնի գնումների մասին: Այդ հրթիռների հեռահարությունը 4500 կմ է, ինչը սաուդցիներին թույլ է տալիս ստանալ ոչ միայն Իրանին եւ Իսրայելին, այլեւ շատ ուրիշ երկրների (նույնիսկ Մերձավոր Արեւելքից դուրս գտնվողների):**

**BBC-ի տվյալներով, Պակիստանի եւ Սաուդյան Արաբիայի միջուկային համագործակցությունը սկսվել է դեռ 90-ականներին: Չնայած դրան, Էր Ռիադը ժխտում է այդ կարգի լուրերը եւ նույնիսկ միացել է Միջուկային զենքի չտարածման պայմանագրին: Սաուդյան Արաբիան հետեւողականորեն հանդես է գալիս հանուն «միջուկազերծ Մերձավոր Արեւելքի» եւ պահանջում է Իսրայելի միջուկային զինաթափում:**

# Արաֆաթի սպանության վարկածը 83 տոկոսով հաստատվեց

## *Շվեյցարացի փորձագետների հաշվետվությունը*

Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները ստացել են հաշվետվություն շվեյցարական Լոզան քաղաքի այն լաբորատորիայից, որտեղ հետազոտվում էր պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթի աճյունը: Քաթարյան «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաալիքը հաղորդում է, որ հաշվետվության տվյալների համաձայն, ռադիոակտիվ ճառագայթումից Արաֆաթի մահացած լինելու հավանականությունը կազմում է 83 տոկոս:

«Ալ Ջազիրայի» վկայակոչած պաշտոնական հաշվետվությունը զբաղեցնում է 108 էջ: Նշվում է, որ շվեյցարացի փորձագետները պոլոնիում-210 ռադիոակտիվ իզոտոպի մեծ կուտակումներ են հայտնաբերել Արաֆաթի կողոսկրերում եւ կոնքոսկրերում: Պաղեստինցի առաջնորդի աճյունի արտաշիրիմումը կատարվել էր անցյալ տարի: Ռադիոակտիվ ճառագայթման հետքեր են հայտնաբերվել նրա գերեզմանից վերցված հողի նմուշներում: Հաշվետվության տվյալների համաձայն, հողի մեջ պոլոնիում-210 իզոտոպի կուտակումը թույլատրելի նորման գերազանցում է 18 անգամ:

Հաշվետվության հեղինակները նաեւ ընդգծում են, որ Արաֆաթի աճյունի մեջ ռադիոակտիվ նյութի մասնիկների գոյության վերաբերյալ անչափ դժվար է միանշանակ հետեւություններ անել թաղումից 8 տարի հետո: Հեղինակները գրում են, որ թունաբանական եւ ճառագայթային հետազոտությունները բարդանում են «կենսաբանական նյութի» անբավարարության պատճառով:



Յասեր Արաֆաթի այրին՝ Սուհա Արաֆաթը, Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, որ ինքը ստացել է իր ամուսնու սպանության համոզիչ ապացույցներ: Նրա խոսքերով, Լոզանում անցկացված հետազոտության արդյունքները միանշանակ վկայում են, որ Արաֆաթին թունավորել են ռադիոակտիվ պոլոնիում-210-ով:

«Մենք իրական ոճրագործության՝ քաղաքական սպանության բացահայտման շեմին ենք» հայտարարել է Արաֆաթի այրին: Նա ավելացրել է, որ միանգամայն գիտական ապացույցներ կան արտաքին ազդեցությունից իր ամուսնու մահացած լինելու վերաբերյալ: Սուհա Արաֆաթը պաղեստինցի առաջնորդի մահվան մեջ որեւէ մեկին չի մեղադրել. միայն հայտարարել է, որ նա «ուներ շատ թշնամիներ»:

Արաֆաթի մահվան պատճառների նոր հետաքննությունը սկսվել էր 2012-ի ամռանը՝ «Ալ Ջազիրա» հեռուստաալիքի այն հաղորդումից հետո, թե փորձագետները նրա անձնական իրերի վրա հայտնաբերել են պոլոնիումի զգալի քանակություն:

Այս տարի կինոծրագիրը նվիրված էր ՀՀ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանի հիշատակին, եւ երեկոն սկսվեց մեծ վարպետին նվիրված ֆիլմով: Ինչպես անցյալ տարի, այս տարի եւս «Կինոաշունն» ամփոփվեց գրախոսականների մրցույթով: Սակայն այս տարի, ի տարբերություն անցյալ տարվա, առաջին անգամ անցկացվեց կինոմրցույթ՝ «Երեւանն իմ քաղաքն է»: Սա լավ նվեր էր մեր մայրաքաղաքի՝ Երեւանի 2795-րդ տարեդարձին: «Երեւանն իմ քաղաքն է» կինոմրցույթի ամփոփումը եւս տեղի ունեցավ միջոցառման ժամանակ:

Կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանի խոսքերով, արդեն չորրորդ անգամ հայկական հին ու նոր կինոն շրջեց ամբողջ Հայաստանով մեծ ու փոքր, հեռավոր ու մոտ, սահմանամերձ ու քաղաքային բնակավայրերում պարգեւելով մեծերին ու մանուկներին ուրախության պահեր. «Առաջին տարիներին ծրագրում տեղ գտած դժվարությունները հաղթահարված են: «Կինոաշունը» կայացած եւ սպասված է հանրության շրջանում: Իսկ այն խնդիրը, որն ի սկզբանե դրված էր ծրագրի հիմքում՝ կինոն տարածել եւ հասանելի դարձնել հանրությանը, արդեն իրականություն է»: Կինոծրագրի հաջորդ կարեւոր խնդիրը՝ երիտասարդության շրջանում կինոյի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելն է, ինչը աստիճանաբար սկսում է արդյունքներ գրանցել. արդեն 4-րդ անգամ անցկացվող գրախոսականների մրցույթով սկսվել է ձեւավորվել կինոքննադատների նոր սերունդ, որոնք մի քանի տարի հետո վստահաբար իրենց տեղը կունենան հայկական կինոհարթակում: Դրա վկայությունը ոչ միայն ստացված գրախոսականների քանակն է, այլ նաեւ որակը, որն էապես տարբերվում է առաջին եւ երկրորդ տարիներից: Գրախոսականների մրցույթի համար ներկայացված 17 աշխատանքներից երեքը՝ ժյուրիի որոշմամբ, չի դիտարկվել, քանի որ սահմանված ժամկետից ուշ էին ներկայացված: Նախորդ տարիների պես 1-ին մրցանակ չընտրվեց: 2-րդ մրցանակը շնորհվեց Մարիա Թոխմաջյանի «Ֆիլմը եթե դոկումենտ չէ, ապա երազ է, անուրջ» աշխատանքին (գրված Մ. Սահակյանի «Այդ ես չեմ» ֆիլմի համար): 3-րդ մրցանակը բաժանվեց Ջուլիետա Տոնականյանի «Մաեստրոյի «Վեցերորդ պատվիրանի» փոխարեն» (գրված Վ. Չալդրանյանի

# «Կինոաշունն» այս տարի վերածվեց կինոտոնի

## *Ամփոփվեց ««Կինոաշուն» ազգային կինոյի ամիս» ծրագրը*




«Ձայն լռության» ֆիլմի համար) եւ Արփինե Փաշայանի «Ունայնության քամի» աշխատանքների միջեւ (գրված Հ. Խաչատրյանի «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» ֆիլմի համար): «Երեւանն իմ քաղաքն է» կինոմրցույթին ներկայացված 7 ֆիլմից ընտրվեց Նարե Գալստյանի «Երեւան ջան» աշխատանքը:

«Կինոաշունը» ամեն տարի փորձում է նորովի ներկայանալ հանրությանը: Հաջորդ՝ 5-րդ հոբելյանական «Կինոաշունը» կունենա նոր բաղադրիչներ, իսկ մեկնարկը կտրվի Արցախ աշխարհից:

Երեւանում, բացի համայնքներից, ֆիլմերը ցուցադրվեցին նաեւ «Նաիրի» կինոթատրոնում, «Նարեկացի» արվեստի միությունում, Հ. Մալյանի անվան թատրոնում եւ բուհերում: Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի եւս կազմակերպվում են բացօթյա ցուցադրումներ «Սիրահարների այգում»: Այս տարի ցուցադրություններն սկսվեցին ավելի վաղ՝ սեպտեմբերի 12-ից, եւ ամեն ուրբաթ «Քաղաք, սեր, կինո» խորագրով ֆիլմեր են ներկայացվում այգում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Յարոսլավ Նադրզիցկին՝ Ա. Խաչատրյան համերգասրահի բեմում

**Ինչպես «Ազգն» արդեն տեղեկացրել է, այս օրերին տեղի է ունենում Ա. Խաչատրյանի անվան միջազգային փառատոնը: Այս անգամ փառատոնի շրջանակում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան) համատեղ հանդես եկավ Լեհաստանը ներկայացնող ջութակահար Յարոսլավ Նադրզիցկին: Վերջինս, ի դեպ, 2010թ. Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հաղթողն է եղել:**



**Երիտասարդ ջութակահարը երեկոյի ընթացքում կատարեց Դմիտրի Շոստակովիչի Ջութակի կոնցերտ թիվ 1-ը: Իսկ համերգի երկրորդ բաժնում հնչեց Պյոտր Իլյիչ Չայկովսկու Սիմֆոնիա թիվ 6-ը (սի մինոր):**

**Յարոսլավ Նադրզիցկին իր առաջնելույթն ունեցել է 12 տարեկանում Մոսկվայի կոնսերվատորիայի նվագախմբի հետ Չայկովսկու անվան Մեծ դահլիճում: 2007-ից սովորել է Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիայում՝ պրոֆեսոր Իգոր Պետրուշեւսկու դասարանում: Բազմաթիվ միջազգային մրցույթներում արժանացել է բարձր մրցանակների, այդ թվում՝ 1-ին մրցանակ Ջ. Էնեսկուի անվան միջազգային մրցույթում (Բուխարեստ, 2009թ.), 1-ին մրցանակ «Վալսեսիա Մուզիկա» ջութակահարների միջազգային մրցույթում (Վարալլո, Իտալիա), 1-ին մրցանակ «Հավերհիլլ Սինֆոնիա» մենակատարների մրցույթում (2008թ.) եւ 1-ին մրցանակ Յաշա Հեյֆեցի անվան ջութակահարների միջազգային մրցույթում (Վիլնյուս, 2001թ.):**

**Յ. Նադրզիցկին ելույթ է ունեցել բազմաթիվ երկրներում՝ ԱՄՆ-ում, Կորեայում, Ավստրիայում, Գերմանիայում, Մոնտենեգրոյում, Խորվաթիայում, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Լիտվայում, Ֆինլանդիայում:**

**Յ. Նադրզիցկին հանդես է եկել նաեւ Լոնդոնի թագավորական ֆիլհարմոնիկ, Ցյուրիխի սիմֆոնիկ, Համբուրգի ֆիլհարմոնիկ, Հայաստանի պետական երիտասարդական, Սլովակիայի Ռադիոյի սիմֆոնիկ, Լեհաստանի ռադիոյի կամերային «Ամադեուս», Լիտվայի ազգային, «Տրանսիլվանիա» պետական ֆիլհարմոնիկ, Ջորջ Էնեսկուի անվան ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ:**

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

# Աղասի Այվազյանին նվիրված երկրորդ փառատոնը կկայանա շուտով

**«Այվազյանական թատերական փառատոնը» ֆինանսական խնդիրների պատճառով երեք անգամ հետաձգվեց, սակայն շուտով՝ նոյեմբերի 11-ին վերջապես կմեկնարկի:**

**Վերջին անգամ փառատոնը տեղի էր ունեցել երկու տարի առաջ, որը համախմբում է ինչպես պրոֆեսիոնալ թատրոնները, այնպես էլ երիտասարդական, սիրողական թատրոնները:**

**Փառատոնի նպատակն է ձեւավորել դաշտ՝ Այվազյանի դրամատուրգիան ապրեցնելու, ինչպես նաեւ մեր ժամանակակից թատրոնում ձեւավորել Աղասի Այվազյանի թատերական խորան:**

**Փառատոնի հանձնախմբի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեւոն Մութաֆյանը փառատոնի, ինչպես նաեւ Աղասի Այվազյանի մասին ասում է. «Աղասի Այվազյանն իր գրականությամբ, մասնավորաբար թատրոնի տարածքում ձեւավորած իր արտակարգ մտածողությամբ, ձեւի եւ բովանդակության զարմանալի հայտածումներով միանգամայն նոր երեւույթ է, գեղագիտական-գեղարվեստական հարթություններում սեփական աշխարհայացքի, պատկերայնության դիրքերից խոսող անհատականություն, որը միավորում է կյանքն ու թատրոնը, իր զարմանալի-ինքնատիպ «դիմակների թատրոնով» ստեղծում կյանքի պարադոքսը:**




**Այվազյանական փառատոնի նպատակն է երեւակել այն մտածումներն ու կուտակումները, որոնք ձեւավորվել են վերջին տասնամյակին եւ որոնք այսօր արդեն մեր ազգային թատրոնում գոյավորում են մի նոր խորշ... Հաճելի է, որ մեր փառատոնի աշխարհագրությունն ընդլայնվում է, որ հատկապես դեպի Աղասի Այվազյանի թատերգություն են գալիս երիտասարդական, ուսանողական թատերախմբերը, մարզերում գործող թատրոնները, որոնք Այվազյանի թատերգության միջոցով կամենում են հասնել ինքնահաստատման: Հուսանք, որ այս փառատոնը մեզ առիթ կտա նոր արձանագրումների, նոր հաստատումների, դեպի Այվազյան տանող ճանապարհի նոր հատվածի յուրացման...»:**

**Այվազյանագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի Փաշայանը նշում է, որ Աղասի Այվազյանը նորօրյա դրամատուրգ է, որը իր պիեսներով թարմություն, նոր շունչ ու որակ բերեց, գեղագիտական հետաքրքիր տարածություն ստեղծեց ինքնատիպ երկխոսություններով ու ռեմարկներներով, որ մտորել ու մտածել է տալիս. «Այսպիսով, Այվազյանը նոր խոսք ասաց մեր դրամատուրգիայի պատմության մեջ: Իրենց ներքին լարվածությամբ հագեցած այվազյանական պիեսները հանդիսատեսին արվեստական լարվածության մեջ պահելու անսպառ կարողությամբ են օժտված. հատկապես «Բիլիարդը», «Աչքը ծոծրակին», «Քարանձավը», «Ազիհասիկը», «Ինքնասպան նավը», «Համակարգիչը»:**

**Այվազյանական հանրապետական թատերական փառատոնի տնօրեն Էրիկ Բարսեղյանն ավելացնում է, որ այս տարի, հուրախություն բոլորիս, աննախադեպ ակտիվ են մարզային թատրոններն ու թատերախմբերը: «Սա նշանակում է, որ փառատոնն, ի թիվ այլ նպատակների, իրականացնում է մի շատ կարեւոր առաքելություն, որն ուղղված է մայրաքաղաքի եւ մարզերի միջեւ ստեղծագործական մթնոլորտի ակտիվացմանը: Եվ չնայած որ «Այվազյանական հանրապետական թատերական փառատոնն» ըստ էության մեկ հեղինակի փառատոն է, թատերական միավորումները ցուցաբերում են հետաքրքրություն եւ հիանալի ակտիվություն, ինչն անշուշտ ողջունելի եւ ուրախալի փաստ է: Փառատոնը նպատակ ունի հնարավորին մեծ լսարանի, հանդիսականի ներկայացնել Աղասի Այվազյան բացառիկ հայի տեսակը, մտածողությունը եւ թատերական-գեղարվեստական այն գույները, տաք աշխարհը, որ կա հեղինակի ստեղծագործություններում: Մինչ օրս հայտեր են ներկայացրել Երեւանի, Վանաձորի, Գավառի, Ալավերդու, Օշականի, Կոտայքի մարզի, Արմավիրի մարզի, Արագածոտնի մարզի, Արարատի մարզի մի շարք թատրոններ ու թատերախմբեր: Փառատոնի բոլոր ներկայացումները տեղի կունենան ԵԹԿՊԻ Ուսումնական թատրոնում, որի համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում բուհի ռեկտոր Արմեն Մազմանյանին: Սիրով սպասում ենք թատերասեր հանրությանը եւ հատկապես նրանց, ովքեր ցանկանում են ծանոթանալ Աղասի Այվազյան դրամատուրգի հետ: Վստահ եմ, որ փառատոնն այս տարի կանցնի բարձր տոնական տրամադրությամբ»:**

**Աղասի Այվազյանը գրել է 25 պիես՝ հետաքրքիր անուններով: Իսկ ստեղծագործության անունն ընտրելը դարձյալ տաղանդի նշան է: Բոլոր պիեսները տարբերվում են մեկը մյուսից. յուրաքանչյուրի մեջ դրամատուրգը նոր մտածելակերպ, ասելիք ու գաղափարախոսություն է դրել: Ամբողջովին նոր է Այվազյանի դրամատուրգիան թե՛ ձեւով եւ թե՛ բովանդակությամբ: Այվազյանական դրամատուրգիայի նորույթն է հենց՝ խորիմաստ, ամեն ինչ ասող ու նկարագրող ռեմարկներով: Ամեն երկիր հպարտ եւ երջանիկ կզգար իրեն այսպիսի շքեղ դրամատուրգ ունենալու համար: Եթե Աղասի Այվազյանը գրած լիներ միայն «Լացի այգին», «Ինքնասպան նավը», «Բիլիարդը», «Ազիհասիկը» կամ «Մանչերը», արդեն իսկ կարող էինք ասել, որ հանձին Աղասի Այվազյանի Հայաստան աշխարհն ունի շատ տաղանդավոր մի դրամատուրգ:**

**Բայց այս բոլորից բացի՝ նա ունի բավական հարուստ եւ արժանահիշատակ գրական ժառանգություն:**

Ս. Հ.

ՄԱՐԶԱԿԱՆ

# Վախթանգ Դարչինյանը խոստացել է նոկաուտի ենթարկել Նոնիտո Դոներին

Նոյեմբերի 9-ին ԱՄՆ-ի Կորպուս Քրիստի քաղաքում կկայանա քաշային 2 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, 37-ամյա Վախթանգ Դարչինյանի եւ քաշային 3 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, 30-ամյա Նոնիտո Դոների երկար սպասված մենամարտը:



2007-ին նրանց միջեւ կայացած առաջին մենամարտում Վախթանգ Դարչինյանն անսպասելիորեն 5-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկվել: Դրանից հետո Վախթանգը բազմիցս մարտահրավեր էր նետել ֆիլիպինցի բռնցքամարտիկին ռեւանշ-մենամարտ անցկացնելու համար, սակայն ամեն անգամ տարբեր պատրվակներով Նոնիտո Դոները հրաժարվել էր Դարչինյանի հետ հանդիպումից: Եվ ահա վերջապես երկար սպասված մենամարտը կայանալու է:

Բնականաբար, հայ բռնցքամարտիկը մարտականորեն է տրամադրված եւ անպայման ձգտելու է ռեւանշի: Դարչինյանն ինչպես միշտ վստահ է իր ուժերին. «Ես անպայման նոկաուտի եմ ենթարկելու Դոներին: Ես նրանից ավելի լավ եմ մենամարտում, մեծ էներգիա ունեմ, հաղթելու վճռականությունս էլ անսահման է: Պատրաստվում եմ ռինգ դուրս գալ ու ոչնչացնել նրան: Ցանկանում եմ ողջ աշխարհին ապացուցել, որ այս մենամարտին շատ երկար եմ սպասել ու պատրաստ եմ հաղթել: Վեց տարի առաջ ես չգիտեի նրան, քչերն էին նրա մասին լսել: Շատերն են համոզված, որ եթե այդ չարաբաստիկ հարվածը չլիներ 6 տարի առաջ, ես նրան կհաղթեի: Նա իմ պարտությամբ հայտնի դարձավ: Նա վախկոտ «ճուտիկ» է եւ դա ես կապացուցեմ ռինգում: Տեղյակ եմ, թե նա ինչպես է վախենում իմ հարվածներից: Ես եմ նրան ստեղծել, ինքս էլ նրան թոշակի կուղարկեմ»:

Վախթանգ Դարչինյանի համար այս մենամարտը կլինի 46-րդը պրոֆեսիոնալ ռինգում: Հայ բռնցքամարտիկը տոնել է 39 հաղթանակ, մեկ մենամարտ ավարտել է ոչ-ոքի, կրել է 5 պարտություն:

Վերջին 2 10-ռաունդանոց մենամարտերում Դարչինյանը հաղթել է: Վերջին անգամ Վախթանգը ռինգ է դուրս եկել այս տարվա մայիսի 11-ին: ԱՄՆ-ում անցկացրած մենամարտում նա 4-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթել է Խավիեր Գալյոյին:

Նոնիտո Դոները 33 մենամարտերից 31-ում հաղթել է, 2-ում պարտվել է:

# «Բորուսիան» դժվարացրեց ուղեգիր նվաճելու խնդիրը



«Արսենալից» 0-1 հաշվով կրած պարտությունը զգալիորեն բարդացրեց ուղեգիր նվաճելու Դորտմունդի «Բորուսիայի» խնդիրը: Դաշտի տերերը շատ ջանքեր գործադրեցին մրցակցի դարպասը գրավելու համար, սակայն ապարդյուն: Գոլ խփելու լավ հնարավորություն ուներ նաեւ Հենրիխ Մխիթարյանը, սակայն չօգտագործեց նպաստավոր պահը:

Խաղի մասին մարզիչները հետեւյալ կարծիքներն են արտահայտել:

Յուրգեն Կլոպ («Բորուսիա»)- Հանդերձարանում ֆուտբոլիստներին ասացի, որ 90 րոպե գործադրած մեր ջանքերի համար արժանի փոխհատուցում չստացանք: Բնավ էլ պարտադիր չէր այսօր պարտվելը: Սակայն հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու հնարավորությունները դեռեւս կորած չեն: Դրա համար անհրաժեշտ է հաղթել մնացած 2 հանդիպումներում: Այսօր որոշ սխալներ թույլ տվեցինք: Ոչ մի կերպ չէինք կարողանում գոլ խփել, իսկ հետո նաեւ գոլ բաց թողեցինք, որից հետո մեզ մոտ կազմակերպված խաղ չստացվեց:

Արսեն Վենգեր («Արսենալ»)- Այսօր ինձ շատ ուրախացրեց ֆուտբոլիստների կենտրոնացվածությունը: Առաջին րոպեներից ուժեղ ճնշման տակ էինք եւ այսպես շարունակվեց մինչեւ խաղավարտ: Սակայն հմտորեն պաշտպանվեցինք եւ կարողացանք խուսափել սխալներից: Ընդհանուր առմամբ հասուն խաղ ցուցադրեցինք: Կարող էինք նաեւ կրկնապատկել հաշիվը: Այսօր մեր պաշտպանությունն իր վրա զգաց դորտմունդցիների ողջ ճնշումը: Սակայն դրսեւորեցինք բնավորություն եւ տակտիկական ճկունություն: Այս հաղթանակը մեծ արժեք ունի եւ ավելի վստահություն կհաղորդի թիմին: Համաձայնվեք, որ ոչ բոլորին կհաջողվեր Դորտմունդում հաղթել դաշտի տերերին:

F խմբում «Բորուսիան» 6 միավորով 3-րդ տեղում է: 9-ական միավորով առաջատարներն են «Արսենալն» ու «Նապոլին»: Վերջինս սեփական հարկի տակ 3-2 հաշվով պարտության մատնեց «Մարսելին»: Ընդ որում առաջինը հաջողության էր հասել «Մարսելը»: Դաշտի տերերից 2 գոլ խփեց Իգուաինը:

Իսպանական 2 ակումբները՝ Մադրիդի «Ատլետիկոն» ու «Բարսելոնը» ժամկետից շուտ 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեցին: «Ատլետիկոն» G խմբում 4-0 հաշվով ջախջախեց «Աուստրիային»՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: 2-րդ տեղի համար պայքարող «Զենիթի» եւ «Պորտոյի» մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: «Զենիթը» 5 միավորով 2-րդ տեղում է, 4 միավոր ունի «Պորտոն»:

H խմբում հանդես եկող «Բարսելոնը» սեփական հարկի տակ 3-1 հաշվով հաղթեց «Միլանին»: Այդ խաղում Մեսին 2 գոլի հեղինակ դարձավ: «Բարսելոնի» կիսապաշտպան Խավին գերազանցեց չեմպիոնների լիգայի մրցաշարերում հաղթանակած խաղերին մասնակցած հանդիպումների քանակով Ռաուլի ռեկորդային ցուցանիշը: Խավիի համար այս հանդիպումը 80-րդն էր, որում «Բարսելոնը» հաղթել է չեմպիոնների լիգայում: Ռաուլը «Ռեալի» հաղթած 79 խաղերին էր մասնակցել: Իսկ ընդհանուր առմամբ Խավին չեմպիոնների լիգայում 141-րդ խաղն անցկացրեց: Նա «Բարսելոնում» հանդես է գալիս 1998-ից եւ 3 անգամ թիմի կազմում նվաճել է չեմպիոնների գավաթը:

«Բարսելոնը» վաստակեց 10 միավոր: 5 միավոր ունի «Միլանը», 4՝ «Այաքսը», որը սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց շոտլանդական «Սելթիկին»:

E խմբում «Չելսին» Լոնդոնում 3-0 հաշվով հաղթելով «Շալկե-04-ին», 9 միավորով գլխավորեց աղյուսակը: Գերմանական ակումբն ունի 6 միավոր, 5 միավորով 3-րդ տեղում «Բազելն» է, որը ոչ-ոքի (1-1) խաղաց «Ստյաուայի» հետ:

ՇԱԽՄԱՏ

# Պոլսահայ շախմատիստները Ստամբուլի փառատոնում

**Armchess.am-ի տեղեկացմամբ, պոլսահայ շախմատիստ Արի Քիրեմիջյանը Ստամբուլում անցկացված շախմատային փառատոնի B մրցաշարում 9 հնարավորից վաստակած 7 միավորով 155 մասնակիցների մեջ զբաղեցրել է 5-րդ տեղը: Պոլսահայ մեկ այլ շախմատիստ՝ Զավեն Չիգդեմօղլուն 4,5 միավոր է գրանցել իր օգտին: Մրցաշարի հաղթող է ճանաչվել սիրիացի Մահմուդ Դահանը՝ 8,5 միավոր:**

**Ստամբուլի շախմատային փառատոնի կայծակնային մրցաշարում պոլսահայ Սարվեն Չակմակը 7 հնարավորից վաստակած 6 միավորով 121 մասնակիցների մեջ բաժանել է 2-7-րդ տեղերը: Նա միայն կես միավորով է հետ մնացել թուրք Մուստաֆա Յիլմազից:**

# Նադալն ու Ջոկովիչը հաղթանակով մեկնարկեցին

**Ռաֆայել Նադալը հաղթանակով սկսեց Լոնդոնում ընթացող թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը՝ 6-3, 6-2 հաշվով պարտության մատնելով Դավիթ Ֆեռերին: B խմբում Նովակ Ջոկովիչը հաղթեց Ռոջեր Ֆեդերերին (6-4, 6-7, 6-2):**

**Մրցումների հաջորդ օրը Նադալը 2-րդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ստանիսլավ Վավրինկայի նկատմամբ (7-6, 7-6): Պայքարից դուրս մնաց Դավիթ Ֆեռերը, որը 4-6, 4-6 հաշվով պարտվեց Թոմաշ Բերդիխին: Դա Ֆեռերի 2-րդ պարտությունն էր:**

# Պելեն Նեյմարին մեծ ապագա է գուշակում

**Ֆուտբոլի արքա Պելեն համոզված է, որ «Բարսելոնի» կազմում բրազիլացի Նեյմարը կառաջադիմի եւ մինչեւ աշխարհի առաջնության մեկնարկը զգալիորեն կբարելավի մարզավիճակը: Պելեի կարծիքով, Նեյմարը ժամանակակից ֆուտբոլի ամենակատարյալ ֆուտբոլիստներից մեկն է, որը դեռ չունի Մեսիի եւ Ռոնալդուի փորձառությունը: Ուստի ըստ Պելեի, այս տարվա «Ոսկե գնդակը» պետք է ստանա Մեսին կամ Ռոնալդուն:**

# Կապելլոն մտադիր է ավարտել մարզչական կարիերան



**Ֆուտբոլի ՌԴ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելլոն հայտարարել է, որ մոտ է մարզչական գործունեությունն ավարտելուն: Նրա գլխավորությամբ Ռուսաստանի հավաքականը 2014-ի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճեց: Ռուսները վերջին 12 տարիներին չէին կարողանում տեղ զբաղեցնել աշխարհի առաջնության մասնակիցների ցանկում:**

**Ֆաբիո Կապելլոյի պայմանագրի ժամկետը ՌԴ հավաքականի հետ ավարտվում է աշխարհի առաջնությունից հետո: «Աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճելը շատ դժվար է, քանի որ հանձինս Պորտուգալիայի հավաքականի, ուժեղ մրցակից ունեինք: Սիրում եմ լուրջ առաջարկներ ընդունել, ինչպես դա եղավ Անգլիայի եւ Ռուսաստանի հավաքականների հետ աշխատելիս: Չնայած այս ամենին, մոտ եմ մարզչական կարիերաս ավարտելուն», նշել է Կապելլոն:**

# Ուղեգրի արժեքը 2 մլն դոլար է

Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան ազգային հավաքականի մարզչական շտաբին եւ ֆուտբոլիստներին 2 մլն դոլար պարգեւավճար է խոստացել, եթե ֆրանսիացիների հետ անցումային խաղերում հաջողվի 2014-ի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել: Նշենք, որ այդ դեպքում Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան ՖԻՖԱ-ից 8 մլն եվրո պարգեւավճար կստանա:

# «Մոնակոն» Վալդեսին 15 մլն եվրո աշխատավարձ է խոստացել

Իսպանական «Բարսելոնի» դարպասապահ Վիկտոր Վալդեսը նախնական համաձայնության է եկել «Մոնակոյի» հետ: Վալդեսը 4 տարվա պայմանագիր կկնքի ֆրանսիական ակումբի հետ, իսկ տարեկան աշխատավարձը կկազմի 15 մլն եվրո:

Անվանի դարպասապահի պայմանագրի ժամկետը «Բարսելոնի» հետ ավարտվելու է 2014-ի ամռանը: Այնպես որ, եթե «Բարսելոնը» նոր պայմանագիր չառաջարկի Վալդեսին, ապա նա կարող է առանց փոխհատուցման հեռանալ թիմից: Բնականաբար, դա ձեռնտու չէ կատալոնական ակումբին:

Վալդեսը «Բարսելոնի» մարզադպրոցի սան է: Նա թիմի հիմնական կազմում նորամուտը նշել է 2002-ին: «Բարսելոնի» կազմում Վալդեսը 506 խաղ է անցկացրել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

# Ալ Բանո՞ն է ներողություն խնդրել, թե՞ Ադրբեջանը



Ադրբեջանական գրեթե բոլոր լրատվամիջոցները երեկ ցնծությամբ գրել են, որ իտալացի հանրահայտ երգիչ Ալ Բանոն «ներողություն է խնդրել Ադրբեջանից»: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղ այցելելուց հետո երգչի անունը հայտնվել է Ադրբեջանի ԱԳՆ «սեւ ցուցակում»:

Այժմ, ինչպես հավաստացնում է Բաքվի մամուլը, նա «դիմել է Իտալիայում Ադրբեջանի դեսպանատուն եւ ներողություն խնդրել, որ Լեռնային Ղարաբաղ այցը չի համաձայնեցրել ադրբեջանական իշխանությունների հետ»:

Օրվա վերջին, սակայն, պարզվեց, որ ադրբեջանական քարոզչամեքենան հերթական անգամ ընդամենը «յուղ է վառել»: Ոչ իշխանական «Թուրան» գործակալությունը տեղեկացրեց, որ տարեվերջին իտալական էստրադայի աստղերի՝ Բաքվում նախատեսված համերգի ազդագրերը «տարածվել են հոկտեմբերի կեսերին, եւ մասնակիցների շարքում կա նաեւ Ալբանո Կարիզիի՝ նույն Ալ Բանոյի անունը»: Մինչդեռ երգչի կողմից «ներողություն խնդրելու եւ Ադրբեջան այցի իրավունք ստանալու դիմումի» մասին հարեւան երկրի ԱԳՆ-ն տեղեկատվություն, ինչպես ասացինք, տարածել է միայն երեկ:

Ստացվում է, որ Ադրբեջանի իշխանությունները «տեղյա՞կ չէին», որ Բաքվում տարածված ազդագրերում կա նաեւ Ալ Բանոյի անունը: Դա բացառված է: Ուստի ամենահավանականն այն է, որ «դեմք փրկելու» համար ադրբեջանական ԱԳՆ-ն ուղղակի հորինել է, որ իտալացի հայտնի երգիչը «Ադրբեջանից ներողություն է խնդրել»:

Այդ է վկայում նաեւ Ադրբեջանի ԱԳՆ մամլո խոսնակի մեկնաբանությունը, որի համաձայն, Իտալիայում ադրբեջանական դեսպանատան հասցեով երգչի ստացված նամակում «ափսոսանք է հայտնված, որ իր անունը հայտնվել է «սեւ ցուցակում», ինչպես նաեւ վստահություն է արտահայտված, որ Լեռնային Ղարաբաղ այցելելով՝ որեւէ քաղաքական նպատակ չի հետապնդվել»: Ալ Բանոն ասել է, որ ինքն «ընդամենը երաժիշտ է, սիրում եւ հարգում է նաեւ ադրբեջանական ժողովրդին եւ նրա արվեստը»:

Ինչպես տեսնում ենք, հայտնի երգիչը ոչ մի բառ չի ասել Ադրբեջանի օրենքները կամ «տարածքային ամբողջականությունը հարգելու» մասին: Մինչդեռ նրա անունը «սեւ ցուցակում» ներառվել է Ադրբեջանի «օկուպացված տարածքներ ապօրինի այցելելու» համար:

Ի վերջո, Էլման Աբդուլլաեւն ասել է, որ «Ադրբեջանը կքննարկի Ալ Բանոյի նամակը», ինչը տվյալ դեպքում կատարյալ անհեթեթություն է, քանի որ երգիչը ոչ թե խնդրել է, որ իրեն թույլ տան Բաքվի համերգին մասնակցել, այլ գրեթե բաց տեքստով ասել, որ ոչ թե Ադրբեջանն է իրեն պետք, այլ ինքն՝ Ադրբեջանին:

Ըստ երեւույթին, ադրբեջանական կողմը ստիպված է եղել Ալ Բանոյից ներողություն խնդրել՝ նրա անունը «սեւ ցուցակում» ընդգրկելու համար եւ բավական ուշացած փորձ է արել փաստը ներկայացնել այնպես, որպեսզի հերթական անգամ կատարյալ հիմար վիճակում չհայտնվի:

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Քիմիայի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
▼ մասնագետ- 1 հաստիք
▼ ուսումնափորձնական կենտրոնի աշխատակից /լաբորանտ/ – 3 հաստիք

Լաբորանտը պետք է ունենա բարձրագույն կրթության մանկավարժության մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան / ?քիմիա? մասնագիտությամբ/:

Մասնագետը- առնվազն մանկավարժության բակալավրի կրթական աստիճան /«քիմիա» մասնագիտությամբ/:

Հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով.
▼ տիրապետել համակարգչային գիտելիքներին, մասնավորապես ծանոթ լինեն Chem office փաթեթի ISIS Draw 2,4/2,5 քիմիական ծրագրերին
▼ տիրապետել առնվազն մեկ օտար լեզվի
▼ հաղորդակցության կարողություններ:

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝
◆ Դիմում ռեկտորի անունով
◆ Ինքնակենսագրություն
◆ Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
◆ Անձնագրի պատճենը
◆ Լուսանկար 1 հատ
◆ Աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:

*Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ ս.թ. նոյեմբերի 15 -ը :*

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին**
**հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծ 17 , 200 սենյակ, հեռ. 59-70-84:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից 2014թ. ընթացքում համակարգչային, ցանցային եւ տպող, պատճենահանող եւ այլ սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասեր եւ նյութեր ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ 2014թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային, ցանցային եւ տպող, պատճենահանող եւ այլ սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասեր եւ նյութեր ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2013թ. դեկտեմբերի 13-ը ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2013թ. դեկտեմբերի 16-ը ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 23-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Գործերի կառավարչություն, հեռ. (010)59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014թ. կարիքներն ապահովելու համար տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ կենտրոնական բանկի 2014թ. կարիքներն ապահովելու նպատակով տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ, մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2013թ. դեկտեմբերի 16-ին -ին ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 23-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող ավտոմեքենաների 2014թ. ընթացքում տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպության ընտրության համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ 2014թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը. մասնագիտական փորձառություն. տեխնիկական միջոցներ. ֆինանսական միջոցներ. աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 13-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկէ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 16-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 23-ին ժամը 16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. (010) 592-802, 592-805, ներքին՝ 18-02, 18-05:

**Հասարակայնությանհետկապերիծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**2014թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում առկա օդորակիչ սարքերի վերանորոգում եւ ընթացիկ սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ 2014թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում առկա օդորակիչ սարքերի վերանորոգում եւ ընթացիկ սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանիփողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2013թ. դեկտեմբերի 16-ին ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 23-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 7.11.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: